Ֆեյսբուքը
նախընտրական հարթակ Հայաստանում

Էլեկտրոնային տեղեկագիր **թիվ 1**

Քաղաքական ուժերի ու Հայաստանյան ինտերնետ մեդիաների կողմից Ֆեյսբուք սոցիալական ցանցում 2012 թ. խորհրդարանական ընտրությունների լուսաբանման այս ուսումնասիրությունն իրականացվում է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի ծրագրով եւ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Ռեգիոն հետազոտական կենտրոնը ինտերնետում

http://regioncenter.info
http://caucasusjournalists.net
http://facebook.com/RegionCenter

ՌԵԳԻՈՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Ինչո՞ւ Ֆեյսբուքը

Ինտերնետը Հայաստանում էլ է դառնում ժամանակի հաղորդակցման հիմնական միջոցը, քանի որ ակտիվորեն ընդլայնվում է ինտերնետից օգտվողների քանակը: ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալներով՝ 2012 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում լայնաշերտ ինտերնետ օգտագործողների թիվը կազմել է 385 հազար, մոտավորապես 50%-ը Երեւանում, 50%-ը՝ մարզերում(http://www.panorama.am/am/interviews/2012/02/14/inet-prices-arabajyan/):

Socialbakers.com վիճակագրական կայքի տվյալներով՝ մարտի վերջի դրությամբ Ֆեյսբուք սոցիալական ցանցի հայաստանցի օգտվողների քանակը հասել է 290 840: Սա, իհարկե, չի նշանակում, որ հենց այդքան առանձին քաղաքացիներ/կամ նրանց խմբեր են օգտվում Ֆեյսբուք ցանցի ծառայություններից, սակայն նույնիսկ ամենակոպիտ հաշվարկները ցույց են տալիս, որ երկրում ինտերնետ օգտագործողների կեսից ավելին նաեւ Ֆեյսբուքի անդամներ են:

Socialbakers.com-ի մարտի վերջի համար ներկայացրած վիճակագրությունից հասկանում ենք, որ Ֆեյսբուքյան հայաստանցիների բացարձակ մեծամասնությունը (83%-ը՝ 241 397 օգտատեր) ընտրական իրավունք ունեցող 18-ը լրացած եւ դրանից բարձր տարիքի պոտենցիալ ընտրողներ են եղել: Ընդ որում՝ այս թվի 36%-ը կազմում էին այսպես կոչված քաղաքական նախասիրությունները

դեռ չձեւավորած, չկողմնորոշված 18-24 տարեկան երիտասարդները: Տարբեր հետազոտությունները վկայում են, որ Հայաստանում այսպես կոչված չկողմնորոշված ընտրողների շարքերում մեծ է նաեւ ավելի բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռը:

Ֆեյսբուքում հայաստանցիների թիվը կազմում է երկրում լայնաշերտ ինտերնետ սպառողների ընդհանուր թվի 63%:

Վերը բերված տվյալները նշանակալի են դարձնում Ֆեյսբուք սոցիալական ցանցում նախընտրական քարոզչությունը՝ ինչպես տարբեր քաղաքական ուժերի ու դաշինքների ծրագրերի ներկայացման, այնպես էլ պոտենցիալ ընտրողների հետ շփումներ, քննարկումներ կազմակերպելու առումով:

Ներկայացվածությունը Ֆեյսբուքում

Ֆեյսբուքում այսօր ներկայացված են հայաստանյան գրեթե բոլոր լրատվամիջոցները, տարբեր կազմակերպություններ ու կուսակցություններ:

Ֆեյսբուքում քաղաքական կուսակցությունների ներկայացվածությունն ու ակտիվությունը տարբեր աստիճանի է: Մի դեպքում մենք գործ ունենք կուսակցության ավելի ակտիվ պաշտոնական էջերի, քան նրանց առաջնորդների ու անդամների էջերի հետ (ՕԵԿ, Ազատ դեմոկրատներ): Մյուս դեպքում(ՀՀԿ, ԲՀԿ, ՀՅԴ, Ժառանգություն) ակտիվ են ինչպես պաշտոնական էջերը, այնպես էլ առանձին, առավել հայտնի կուսակցականների անհատական էջերը: Ֆեյսբուքի՝ որպես նախընտրական հարթակի նշանակությունն այսօր ընկալելու մասին է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի նման կուսակցությունները, որոնք ըստ էության չունեն քարոզչական միջոցների սղության խնդիրներ (քանի որ իրենց տրամադրության տակ ունեն հեռուստաալիքներ) բավական ակտիվ են ներկայացված ցանցում: Այն, որ մի շարք հայտնի քաղաքական գործիչներ սկսեցին գրանցվել Ֆեյսբուքում դեռեւս անցած տարվա աշնանից, իհարկե, կարելի է գնահատել որպես Ֆեյսբուքի օգտատերերի քանակի անընդհատ ավելացման օրինակներ: Բայց մյուս կողմից՝ դա կարելի է ընկալել նաեւ որպես խորհրդարանական ընտրություններին

Պահի բացառիկությունը պայմանավորված է այն բանով, որ առաջին անգամ Հայաստանում ընտրական գործընթացների պատմության մեջ Ֆեյսբուքը հանդես է գալիս որպես նախընտրական մի նոր հարթակ, որը սակայն կարող է ոչ միայն չզիջել Հայաստանում մինչեւ վերջերս ամենաազդեցիկ քարոզչական միջոցը համարվող հեռուստատեսությանն, այլեւ ունի նրա եւ այլ ԶԼՄ-ների համեմատ երկու առավելություն.

նախապատրաստվելու ձեւերից մեկը:

1

• Ֆեյսբուքում չի լինում «չափից ավելի տեղեկատվություն», այսինքն՝ ընտրություններին մասնակցող ուժերի համար չկա սեփական դիրքորոշումները ներկայացնելու սահմանափակ ժամանակացույց, չկա ընտրողների առջեւ հանդես գալու համար վճարման անհրաժեշտություն, ինչպես դա արվում է հեռուստատեսության եւ այլ ՁԼՄ-ների պարագայում:

2

• Ֆեյսբուքի միջոցով, ի տարբերություն, քարոզարշավի մինչ օրս կիրառված բոլոր միջոցների (ներառյալ նույնիսկ ընտրողների հետ կենդանի հանդիպումները) կարելի է հետեւել ընտրազանգվածի ստվար խմբերի իրական տրամադրություններին, պահպանել նրանց հետ ինտերակտիվ կապ ու գնահատել սեփական ու մրցակից ուժերի քարոզարշավների արդյունավետությունը:

Հենց այս հանգամանքներից ելնելով՝ Ռեգիոն հետազոտական կենտրոնը ձեռնամուխ եղավ Ֆեյսբուքում ընտրական գործընթացների դիտարկմանը:

Դիտարկման գաղափարը, մեթոդաբանությունը եւ արդյունքների վերլուծությունը՝ Ռեգիոն կենտրոնի տնօրեն՝ **Լ.Բաղդասարյանի**

Դիտարկման խումբը՝
Ս.Քյուրքչյան, Ա.Չոբանյան, Ա.Շիրինյան, Լ.Նազարյան, Վ.Սարուխանյան

Դիտարկման արդյունքների տեխնիկական մշակումը՝ **Շ.Ստեփանյանի**

Տեղեկագրի անգլերեն տարբերակի թարգմանությունը՝ **Ք.Սողիկյանի**

Տեղեկագրի ձեւավորումը՝ **Մ.Վարդանյանի**

Դիտարկման փուլերը եւ ուղղությունները

Ֆեյսբուքում ընտրական գործընթացների լուսաբանման դիտարկումն իրականացվում է երեք փուլերով եւ երեք ուղղություններով:

1

Առաջին ուղղությունը Ֆեյսբուքում հայաստանյան հինգ առցանց ռեյտինգային լրատվամիջոցների Ֆեյսբուքյան էջերի ուսումնասիրությունն է ինչպես տարբեր քաղաքական ուժերի մասին ներկայացվող նյութերի բազմաշերտ վերլուծության, այնպես էլ այդ նյութերի նկատմամբ լսարանի դրսեւորած կեցվածքի՝ ինտերակտիվության, տեսանկյունից:

2

Երկրորդ ուղղությունը Ֆեյսբուքում քաղաքական տարբեր կուսակցությունների պաշտոնական կամ ցանցում առավել ակտիվ գործունեություն ծավալող թեկնածուների անձնական էջերի դիտարկումն է նախընտրական քարոզչության ակտիվության, բովանդակության, ընտրողների հետ նրանց ունեցած երկխոսությունների, քննարկումների եւ մի քանի այլ տեսանկյուններից:

3

Երրորդ ուղղությունը կազմում է այսպես կոչված Ֆեյսբուքյան խմբերում ընտրական գործընթացների մասին ծավալվող դիսկուրսի ուսումնասիրությունը:

1

Առաջին փուլը ներառել է 1 փետրվարի - 31 մարտի ժամանակահատվածը եւ այդ ընթացքում իրականացվել է առցանց լրատվամիջոցների Ֆեյսբուքյան էջերի դիտարկում «խորհրդարանական ընտրություններ» ընդհանուր թեմայով:

2

Երկրորդ փուլի՝ պաշտոնական քարոզարշավի ընթացքում (8 ապրիլի – 4 մայիսի), որն արդեն սկսվել է, լրատվամիջոցների էջերի ուսումնասիրությանը զուգահեռ ընթանում են նաեւ քաղաքական կուսակցությունների/դաշինքների եւ ֆեյսբուքյան մի քանի առավել մեծաթիվ խմբերի էջերի դիտարկումները:

3

Երրորդ փուլում (ընտրությունների օրը՝ մայիսի 6 եւ դրան հաջորդող երկու շաբաթ) ուսումնասիրությունները կշարունակվեն դարձյալ երեք ուղղություններով՝ լրատվամիջոցների, քաղաքական կուսակցությունների եւ ֆեյսբուքյան խմբերի ուսումնասիրություններ հիմնականում ընտրազանգվածի կողմից տրվող գնահատականների ու քննարկումների շեշտադրումով:

***

Հատուկ ընդգծենք, որ սույն դիտարկումը իրազեկային բնույթ ունի: Ընտրական թեմաների նկատմամբ սոցիալական ցանցի օգտատերերի ինտերակտիվության մակարդակը բնութագրող տվյալները բացարձակ ճշգրիտ չեն, ինչը պայմանավորված է ֆեյսբուք սոցիալական ցանցի տեխնիկական առանձնահատկություններով.տեղեկատվության հանրային եւ ոչ հանրային բնույթ, տեղեկատվության ալիքաձեւ տարածում (առաջին հերթին՝ ընկերներին, ապա՝ ընկերների ընկերներին), նյութերին հետահայաց արձագանքելու հնարավորություն եւ այլն:

Ֆեյսբուք սոցիալական ցանցում հայաստանյան առցանց մեդիաների կողմից 2012թ. խորհրդարանական ընտրությունների լուսաբանման դիտարկման

առաջին փուլի

(1 փետրվարի – 31մարտի) արդյունքներ

Դիտարկման օբյեկտները

Դիտարկման համար ընտրվել են այն ինտերնետային ԶԼՄ-ները, որոնք՝

- ունեն մեծ լսարաններ ինչպես այսպես կոչված «մայր կայքերի», այնպես էլ ֆեյսբուքյան էջերի դեպքում,
- իրենց ամբողջության մեջ դրսևորում են տարբեր քաղաքական նախասիրություններ ու կողմնորոշումներ:

Այդպես մենք ստացել ենք ԶԼՄ-ների հետևյալ խումբը.

news.am	tert.am	1in.am	zham.am	7or.am

Բոլոր այս լրատվամիջոցները Ֆեյսբուքում ունեն մի քանի էջեր, դրանցից ոմանք՝ նաև մի քանի լեզուներով: Դիտարկվել են լրատվամիջոցների հայերեն էջերը՝

Tert.am Новости/Медиа (Ֆեյսբուքում էջ ունի 2008 թ. փետրվարից),
News.amНовости/Медиа (Ֆեյսբուքում էջ ունի 2010թ. հուլիսից),
1in.am Armenian News & Analyses(Ֆեյսբուքում էջ ունի 2011թ. հոկտեմբերից),
Zham.am (Ֆեյսբուքում էջ ունի 2011թ. մայիսից),
7or.am Новости/Медиа (Ֆեյսբուքում էջ ունի 2011թ. մայիսից):

* *Դիտարկվող էջերի անվանումները բերված են Ֆեյսբուքում նրանց գրանցման լեզվին համապատասխան:*

Դիտարկման առարկան

Հիմք ընդունելով, որ փետրվար եւ մարտ ամիսները պաշտոնական քարոզարշավին նախորդող ժամանակաշրջան են, եւ լրատվամիջոցներում այս կամ այն ուժերի մասին պատմող նյութերի ընկալումը կարող է ոչ միանշանակ լինել, ուսումնասիրվեցին միայն այն նյութերը, որոնք միայն կոնտեքստային առնչություն ունեին «խորհրդարանական ընտրություններ» թեմայի հետ:

Այլ խոսքերով, դիտարկմանը ենթակա նյութերի ընտրության ժամանակ գործածվել է «խորհրդարանական ընտրություններ» ֆիլտրը: Այդպես, ուսումնասիրության այդ փուլում վերը նշված լրատվամիջոցների ֆեյսբուքյան էջերում հայտնված բոլոր այն նյութերը, որոնք ենթատեքստով կապված են եղել առաջիկա խորհրդարանական ընտրությունների հետ, սակայն կոնտեքստով խորհրդարանական ընտրությունների բացարձակ ոչ մի հիշատակում չեն ընդգրկել, հաշվի չեն առնվել (նախագահի, վարչապետի, կառավարական տարբեր գերատեսչությունների, Ազգային ժողովի գործունեությունը լուսաբանող նյութերը, այդ ընթացքում հասարակական առավել մեծ հնչեղություն ունեցած տարբեր գործընթացների մասին նյութերը՝ Թեղուտի գործընթաց, Երեւանի Մաշտոցի պուրակի հետ կապված գործընթացներ, հայաստանյան սոցիալ-քաղաքական եւ այլ բնագավառներում տիրող իրավիճակների նկարագրություններ եւ այլն):

Ասենք՝ news.am-ում «Ովքեր են խորհրդարանի ամենաակտիվ եւ ամենապասիվ պատգամավորները» նյութը, որտեղ ներկայացվում են խորհրդարանի parliamentmonitoring.am կայքից տվյալներ ԱԺ նիստերից ամենից շատ բացակայած, քվեարկած եւ ելույթ ունեցած պատգամավորների ցանկերը, իհարկե, խորհրդարանական ընտրությունների պաշտոնական քարոզարշավի նախաշեմին կարելի է ընկալել որպես առաջիկա ընտրությունների հետ ենթատեքստով առնչվող նյութ, որն անուղղակի քարոզում է ընթերցողներին քվեարկելու առավել ակտիվ պատգամավորների օգտին: Սակայն քանի որ նյութում չի եղել եւ ոչ մի ակնարկ առաջիկա ընտրությունների մասին, այն չի դիտարկվել: Այդպես, չեն դիտարկվել նաեւ ասենք, 2008թ. մարտի մեկի դեպքերին առնչվող բոլոր այն նյութերը, որոնց մեջ չեն եղել կոնտեքստային կապեր առաջիկա ընտրությունների հետ: Ինչպես նաեւ՝ եթե խորհրդարանական ընտրությունների հետ կոնտեքստով չեն կապվել Հրազդանի քաղաքապետի ընտրությունների (փետրվարի 12), դիտարկման ժամանակահատվածում ընդունված «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրինագծի» թեմաներով նյութերը եւ այլն:

Մեր նախնական հարցումներն ուսումնասիրվող լրատվամիջոցների ֆեյսբուքյան էջերի պատասխանատուների շրջանում ցույց տվեցին, որ անգամ այս հինգ լրատվամիջոցների դեպքում մայր կայքերից ֆեյսբուքյան էջեր նյութեր «ուղարկելու» եւ տեխնիկական միջոցները, եւ բովանդակային մոտեցումները տարբեր են: Մի դեպքում դա անում են էջերի ադմինիստրատորները, մյուս դեպքում՝ օրվա հերթապահ լրագրողները, երրորդ դեպքում՝ իրենց պնդումներով՝ բովանդակությունն ինտեգրվում է ֆեյսբուքյան էջերին ավտոմատ եղանակով:

Սակայն մեր ուսումասիրած լրատվամիջոցներից եւ ոչ մեկի ֆեյսբուքյան էջերը հայելանման չեն կրկնում «մայր կայքերի» օրվա բովանդակությունը:Ավելին, ֆեյսբուքյան էջերում կարողեն մի քանի անգամ տեղադրվել ոչ միայն օրվա, այլեւ նախորդ օրերի ընթացքում արդեն տեղադրված նյութերը, որոնք լրատվամիջոցի ներկայացուցիչների տեսանկյունից հավանաբար կարող է ռեյտինգային նյութ դառնալ: Բացի այդ, որոշ քանակ են կազմել նյութերը, որոնք տեղադրվել են լրատվամիջոցների հայալեզու էջերում միանգամից երկու՝ հայերեն եւ ռուսերեն լեզուներով: Բոլոր այս դեպքերում նյութը հաշվվել է մեկ անգամ, որպեսզի արհեստականորեն չփոփոխվեն ուսումնասիրության արդյունքները:

Ընտրությունների մասին նյութերի ծավալը դիտարկվող լրատվամիջոցների ֆեյսբուքյան էջերում

Փետրվարի ընթացքում միակ լրատվամիջոցը, որի ֆեյսբուքյան էջում մյուսների համեմատ զգալիորեն ավելի քիչ նյութ է եղել ընտրությունների վերաբերյալ, news.am-ն է եղել. 73 նյութ այս լրատվամիջոցի ֆեյսբուքյան էջում դարձյալ բարձր վարկանիշով՝ 1in.am-ի 248 նյութի, եւ կամ զգալիորեն ավելի փոքրաթիվ լսարաններով 7or-ի (ընտրությունների մասին 217 նյութ փետրվարին) եւ zham am-ի (193 նյութ) համեմատ: Սակայն մարտին news.am-ի եւ tert.am-ի էջերում արձանագրվեցին ընտրություններին նվիրված նյութերի համապատասխանաբար՝ 1,5 եւ 2 անգամ ավելացումներ: Մնացած երեք լրատվամիջոցների էջերում այս նյութերի քանակն ավելացել է 50- 80 նյութով:

Ընտրությունների թեմայով նյութերի քանակը ֆեյսբուքում

ԶԼՄ	Փետրվար	Մարտ	Ընդամենը
1in.am	248	291	539
7or.am	217	363	580
news.am	73	173	246
tert.am	202	449	652
zham.am	193	262	455

Չնայած, որ պաշտոնական քարոզարշավի մոտեցմանը զուգահեռ մեծանում էր նաեւ ֆեյսբուքյան էջերում ընտրությունների թեմայով նյութերի տեսակարար կշիռը, այնուամենայնիվ դրանց միայն մի հատվածն էր ուղղվում ֆեյսբուքյան էջեր: Ընդ որում՝ ոչ մի լրատվամիջոցի դեպքում ստաբիլ սկզբունք չի հաջողվել հայտնաբերել:

Այսպես, մարտի ընթացքում 1in.am-ի մայր կայքի ընտրություններին նվիրված 678 նյութի 43%-ն է ուղղվել համապատասխան ֆեյսբուքյան էջ, tert.am-ի՝ 656 նյութի 68%-ը, news.am-ի 448 նյութի 39%-ը, 7or.am-ի 408 նյութի՝ 89%-ը եւ zham.am-ի 403 նյութի 65%-ը:

Ընտրությունների թեմայով նյութերը Ֆեյսբուքում և մայր կայքում (մարտի 1-31)



Ինչի՞ մասին են խոսել

Դիտարկման ժամանկահատվածում խորհրդարանական ընտրություններին կոնտեքստով առնչվող նյութերի բացարձակ մեծամասնությունը բոլոր հինգ լրատվամիջոցներում նվիրված է եղել ընտրական գործընթացներին (համամասնական եւ մեծամասնական ընտրակարգի մասին ծավալված բանավեճին, ԿԸՀ-ին եւ նախընտրական շտաբներին, քաղաքական ուժերի դասավորությանը, ձեւավորվող կամ չձեւավորվող դաշինքներին, ընտրացուցակների կազմմանը եւ մի շարք այլ հարցերին):

Այսպես, 1in.am- ում 1119 թեմաների ընդհանուր քանակի 98,1%-ը , 7or. am-ի 1055 թեմաների 95,8%-ը , news.am-ի 582 թեմաների 99,8%-ը , tert.am 1403-ի 99,4%-ը, zham.am-ի 930 թեմաների 93,4% -ը եղել են հենց ընտրական գործընթացների մասին:

Համեմատաբար ավելի քիչ են այսպես կոչված ընդհանրական նյութերն ընտրական ընթացակարգերի, ժամանակացույցերի եւ այլ խնդիրների մասին: Սրանք նյութեր են առանց այս կամ այն քաղաքական ուժերի եւ նրանց ներկայացուցիչների կոնկրետ հիշատակումների: Ընտրական գործընթացների մասին այս խմբի նյութերում դիտարկված բոլոր ֆեյսբուքյան էջերում գերակշռում են չեզոք վերաբերմունքի դրսեւորման օրինակները գործող կանոկակարգերի, ընթացակարգերի եւ ընտրական ողջ ժամանակաշրջանի կազմակերպման նկատմամբ: Բացասական գնահատականները ավելի շատ են, քան դրականները: Բոլորից շատ դրական եւ բացասական գնահատականներ ընտրական ընթացակարգերի, ԿԸՀ գործունեության եւ այլ հարցերի մասին արձանագրվել են tert.am –ի էջում (4 դրական եւ 20 բացասական գնահատականներ նույն էջում երկու ամիսների ընթացքում արձանագրված 41 չեզոք նշանով թեմային անդրադարձների համեմատ):

Ընտրություններին նվիրված նյութերում մնացած թեմաներին (քաղաքական ազատություններ, սոցիալ-տնտեսական, արտաքին քաղաքական խնդիրներ, անվտանգության/բանակ/Ղարաբաղ) առավելանդրադարձներ են եղել tert.am, zham.am եւ 7or. am-ի ֆեյսբուքյան էջերում: Այսպես՝ ընտրական գործընթացների ֆոնին քաղաքական ազատությունների հարցերն առավելագույնս շոշափվել են 7or. am-ում(3,1%), սոցիալ-տնտեսական եւ արտաքին քաղաքական հարցերը՝ zham.am-ում (համապատասխանաբար՝ 4,3% եւ 1,8%), անվտանգության/բանակի/Ղարաբաղի թեման՝ tert.am-ում 0,8%:

Ո՞վ, ինչպե՞ս եւ ու՞մ մասին է խոսել ընտրությունների մասին նյութերում

Հատկանշական է, որ արդեն իսկ փետրվարից, դեռեւս պաշտոնական քարոզարշավը սկսվելուց երկու ամիս առաջ խորհրդարանական ընտրությունների մասին նյութերի գերակշիռ մեծամասնության մեջ առկա են քաղաքական կուսակցությունների կոնկրետ հիշատակումներ: Առհասարակ իշխանությունների եւ ընդդիմության՝ որպես հավաքական ուժերի,մասին դատողություններ ուսումնասիրված ԶԼՄ-ների ֆեյսբուքյան էջերում շատ քիչ են եղել:

Փետրվար-մարտ ամիսների ընթացքում դիտարկվող ԶԼՄ-ների ֆեյսբուքյան էջերում տեղ գտած ընտրությունների թեմայով նյութերում հիշատակվել են ընդհանուր առմամբ 47 քաղաքական կուսակցություններ (հիշատակված կուսակցությունների ցանկը՝ հավելվածում):

Սակայն, հիմնական ուշադրությունը գամված է եղել ԱԺ-ում պատգամավորական տեղերի համար պայքարող 9 քաղաքական ուժերից 7-ի (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, Ժառանգություն, Ազատ դեմոկրատներ, ՀԱԿ) վրա: Ընդ որում՝ տարբեր լրատվամիջոցներում՝ ըստ այդ կուսակցությունների ու ուժերի հիշատակումների ընդհանուր քանակի, ձեւավորվել են տարբեր հերթականություններ:Սակայն, բոլոր լրատվամիջոցներում ըստ հիշատակումների ընդհանուր քանակի ամենքից շատ ուշադրության կենտրոնում են եղել ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն եւ ՀԱԿ-ը:
Անկախ պատգամավորության թեկնածուներին անդրադարձներ եղել են դիտարկված հինգ լրատվամիջոցներից երեքի ֆեյսբուքյան էջերում. Tert.am- (25 չեզոք եւ 4 դրական հիշատակում), zham.am (միայն 22 չեզոք հիշատակում) եւ

7or.am (միայն 8 չեզոք հիշատակում): 1in.am-ի եւ news.am-ի ֆեյսբուքյան էջերում անկախ թեկնածուներին որեւէ անդրադարձ առհասարակ չի եղել:

Սա եւս մեկ անգամ ապացուցում է, որ չնայած Հայաստանում գործող երկու՝ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի առկայությանն ու պրակտիկ կիրառմանը, փետրվար-մարտի ընթացքում քարոզչական մակարդակում համամասնական ընտրակարգը հեգեմոն դիրքեր ուներ: Այսինքն՝ հիմնական ուշադրությունը դարձվում էր ոչ թե կոնկրետ թեկնածուներին եւ նրանց պոտենցիալներին, այլ այն բանին, թե նրանց տեսանկյունից՝ քաղաքական որ ուժի ընտրացուցակն է առավել հարմար տրամպլին լինելու խորհրդարանում հայտնվելու համար:

Նշանային (չեզոք, դրական եւ բացասական) հիշատակումներ

Տարբեր քաղաքական ուժերի հիշատակումների ճնշող մեծամասնությունը չեզոք է:Դրանք կոնտեքստային առումով չեն արտահայտում դրական կամ բացասական վերաբերմունք, գնահատական, նկարագրություն: Հաջորդ խումբն ըստ քանակի կազմում են բացասական նշանով հիշատակումները: Դրական հիշատակումների տեսակարար կշիռն ընդհանուր քանակում շատ ավելի համեստ է (տես հավելվածը, աղյուսակ 1 եւ 2):

Հատկանշական է, որ արդեն փետրվարից, պաշտոնական քարոզարշավի մեկնարկից դեռ երկու ամիս առաջ կուսակցությունները սկսեցին դրսեւորել պաշտոնական քարոզարշավին բնորոշ վարքագիծ. «գործընկերային, թիմային» զգացողությունները տեղի էին տվել մի կողմից՝ իշխանական կոալիցիայի ներկայացուցիչների, մյուս կողմից՝ ընդդիմադիր ուժերի միջեւ փոխհարաբերություններում:

Դատելով նշանային հիշատակումների ու դրանց հեղինակների պատկերից՝ կարելի է պնդել, որ արդեն փետրվարից քարոզչության մեջ սկսեց գործել «յուրաքանչյուրն իր օգտին» կարգախոսը:

Այսպես, դրական հիշատակումներ կուսակցությունները ստացել են հենց իրենց իսկ ներկայացուցիչների կողմից: Բացասական հիշատակումների առումով պատկերը դասական է. իշխանական ուժերն ավելի շատ բացասական առումով արտահայտվել են ընդդիմադիր կուսակցությունների մասին, եւ հակառակը՝ ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչների հնչեցրած բացասական հիշատակումները վերաբերել են իշխանական կուսակցություններին:
Այսպես, ՀՀԿ-ի մասին ամենից շատ դրական առումով խոսվել է Tert.am—ում (31 դրական հիշատակում, որոնցից 28-ի հեղինակները հենց ՀՀԿ ներկայացուցիչներն են, 1 դրական հիշատակում ՀՀԿ-ն ստացել է ՕԵԿ-ից, եւ 2 դրական հիշատակում՝ ԲՀԿ-ից): 7or.am-ում ՀՀԿ-ի ընդամենը 16 դրական հիշատակումներից 15-ի հեղինակներն էլ են ՀՀԿ ներկայացուցիչները, 1 դրական հիշատակում ՀՀԿ-ն ստացել է ՕԵԿ-ից, եւ ոչ մի դրական հիշատակում՝ ԲՀԿ-ից:

zham.am-ումնույն պատկերն է. ՀՀԿ-ի 18 դրական հիշատակումներից 17-ի հեղինակները ՀՀԿ ներկայացուցիչներն են, 1 դրական հիշատակում ՀՀԿ-ն ստացել է դարձյալ ՕԵԿ-ից, եւ ոչ մի դրական գնահատական՝ ԲՀԿ-ից: 1in.am-ում ՀՀԿ-ին

տրվել է 16 դրական հիշատակում, որոնցից 15-ը հեղինակել են ՀՀԿ ներկայացուցիչները, 1-ը՝ ԲՀԿ անդամները:

ԲՀԿ-ն ամենից շատ դրական գնահատականներ ստացել է 7or.am-ի (31) եւ zham.am-ի (27) Ֆեյսբուքյան էջերի ընտրական թեմաներով նյութերում:Սրանց հեղինակների մեծ մասն էլ ԲՀԿ ներկայացուցիչներն են:

ՕԵԿ-ի դրական հիշատակումների պատկերն էապես տարբերվում է կոալիցիայի այս մյուս երկու անդամների մասին դրական հիշատակումներից թե քանակի, թե դիտարկված լրատվամիջոցներում դրանց համաչափ բաշխվածության տեսանկյունից: Այսպես, ՕԵԿ-ին դրական անդրադարձներ են եղել Tert.am –ում (9 դրական հիշատակում), 1in.am-ում եւ zham.am-ում (4–ական դրական հիշատակում):

ՀՅԴ-ի դրական հիշատակումների քանակը անհամեմատ ավելի քիչ է՝ ընդամենը 1-3 դրական հիշատակում, այն էլ ոչ բոլոր լրատվամիջոցների Ֆեյսբուքյան էջերում: Փոխարենը ավելի շատ են ընդդիմադիր ուժերի հասցեին հնչած դրական գնահատականները:
ՀԱԿ-ը առավելագույնս դրական առումով հիշատակվել է Tert.am –ում (24 դրական հիշատակում) եւ 1in.am-ում (12 դրական հիշատակում):
Ազատ դեմոկրատները առավելագույն դրական գնահատականներ ստացել են 1in.am-ում, Ժառանգությունը՝ zham.am-ում (տես հավելվածը):

Հիշատակումների հեղինակները

1in.am

ՀՀԿ-ի բոլոր հիշատակումների «հեղինակների» ցանկում առաջին տեղը զբաղեցնում են այսպես կոչված «այլ ՁԼՄ-ները» (արտատպություններ/հղումներ հայաստանյան այլ ՁԼՄ-ներին), այնուհետեւ՝ սեփական լրագրողները եւ ՀՀԿ ներկայացուցիչները:

ԲՀԿ- ի մասին 1in.am-ում ամենից շատ հիշատակումներ եղել են այլ ՁԼՄ-ներից, հետո՝ սեփական լրագրողներից եւ ԲՀԿ ներկայացուցիչներից:

ՕԵԿ- այլ ՁԼՄ-ներ եւ ՕԵԿ:

Ժառանգության, ՀՅԴ հիշատակումների հեղինակները սեփական լրագրողներն են:

7or.am

ՀՀԿ-ի հիշատակումների հեղինակներն են՝ սեփական լրագրողները, ՀՀԿ-ն եւ փորձագետները (քաղաքագետներ, սոցիոլոգներ, հոգեբաններ, ՀԿ ներկայացուցիչներ):

ԲՀԿ-ի մասին այս լրատվամիջոցում գլխավորապես խոսել են սեփական լրագրողները եւ ԲՀԿ ներկայացուցիչները:

Ժառանգության մասին՝ սեփական լրագրողները եւ Ժառանգության ներկայացուցիչները:

ՕԵԿ եւ ՀՅԴ-ի հիշատակումների հեղինակները սեփական լրագրողներն են:

News.am

ՀՀԿ-ի հիշատակումների հեղինակներն են՝ սեփական լրագրողները, ՀՀԿ ներկայացուցիչները, այլ ԶԼՄ-ները եւ ՀԱԿ ներկայացուցիչները:

ԲՀԿ՝ սեփական լրագրողները եւ ԲՀԿ անդամները:

ՕԵԿ-ի հիշատակումների հեղինակներն են սեփական լրագրողները եւ այլ ԶԼՄ-ները:

Ժառանգության եւ ՀՅԴ-ի հիշատակումները պատկանում են սեփական լրագրողներին:

Tert.am

ՀՀԿ –այլ ԶԼՄ-ներ, սեփական լրագրողներ, ՀՀԿ անդամներ

ԲՀԿ –այլ ԶԼՄ-ներ, սեփական լրագրողներ, ԲՀԿ եւ ՀՀԿ անդամներ

ՀԱԿ –սեփական լրագրողներ եւ այլ ԶԼՄ-ներ

Ժառանգություն –սեփական լրագրողներ:

zham.am

ՀՀԿ-ի հիշատակումների ամենաշատ հեղինակներն են՝ սեփական լրագրողները, այնուհետեւ այլ ԶԼՄ-ները, ՀՀԿ անդամները եւ փորձագետները:

ՀԱԿ-ինը՝սեփական լրագրողները:

ԲՀԿ-ի հիշատակումների հեղինակները գլխավորապես եղել են սեփական լրագրողները, անուհետեւ՝ ԲՀԿ անդամները եւ փորձագետները:

Ժառանգությունն ու ՀՅԴ-նհիշատակվել են գլխավորապես սեփական լրագրողների կողմից:

Ով ում մասին է խոսել

ԶԼՄ		1	2	3	4	5	6	7	8	9	10
1in.am	Ով	Այլ ԶԼՄ	Սեփ. լրագ.	Այլ ԶԼՄ	ՀՀԿ	Սեփ. լրագ.	Այլ ԶԼՄ	Սեփ. լրագ.	ԲՀԿ	Սեփ. լրագ.	ՕԵԿ
	Ում մասին	ՀՀԿ	ՀՀԿ	ԲՀԿ	ՀՀԿ	ԲՀԿ	ՕԵԿ	Ժառանգություն	ԲՀԿ	ՀՅԴ	ՕԵԿ
		125	86	72	65	55	42	31	30	21	16
7or.am	Ով	Սեփ. լրագ.	ՀՀԿ	Սեփ. լրագ.	Սեփ. լրագ.	ԲՀԿ	Սեփ. լրագ.	ՀՅԴ	Փորձագետ	Ժառանգություն	Սեփ. լրագ.
	Ում մասին	ՀՀԿ	ՀՀԿ	ԲՀԿ	Ժառանգություն	ԲՀԿ	ՕԵԿ	ՀՅԴ	ՀՀԿ	Ժառանգություն	ՀՅԴ
		137	63	55	38	32	31	25	24	22	21
news.am	Ով	Սեփ. լրագ.	ՀՀԿ	Այլ ԶԼՄ	Սեփ. լրագ.	Սեփ. լրագ.	Սեփ. լրագ.	Սեփ. լրագ.	ԲՀԿ	Այլ ԶԼՄ	ՀԱԿ
	Ում մասին	ՀՀԿ	ՀՀԿ	ՀՀԿ	ԲՀԿ	Ժառանգություն	ՀՅԴ	ՕԵԿ	ԲՀԿ	ՕԵԿ	ՀՀԿ
		58	38	38	30	25	21	22	17	14	12
tert.am	Ով	Այլ ԶԼՄ	Սեփ. լրագ.	Այլ ԶԼՄ	ՀՀԿ	Սեփ. լրագ.	Սեփ. լրագ.	ԲՀԿ	Սեփ. լրագ.	Այլ ԶԼՄ	ՀՀԿ
	Ում մասին	ՀՀԿ	ՀՀԿ	ԲՀԿ	ՀՀԿ	ԲՀԿ	ՀԱԿ	ԲՀԿ	Ժառանգություն	ՀԱԿ	ԲՀԿ
		125	76	76	71	56	39	36	33	30	26
zham.am	Ով	Սեփ. լրագ.	Այլ ԶԼՄ	ՀՀԿ	Սեփ. լրագ.	Սեփ. լրագ.	ԲՀԿ	Սեփ. լրագ.	Փորձագետ	Սեփ. լրագ.	Փորձագետ
	Ում մասին	ՀՀԿ	ՀՀԿ	ՀՀԿ	ՀԱԿ	ԲՀԿ	ԲՀԿ	Ժառանգություն	ՀՀԿ	ՀՅԴ	ԲՀԿ
		75	55	52	37	35	27	26	22	19	19

ՌԵԳԻՈՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ինտերակտիվության աստիճանը

Տարածված կարծիք կա, թե ֆեյսբուքյան օգտատերերը երկրի բնակչության քաղաքացիական առավել ակտիվ դիրքորոշում ունեցող հատվածն են, քանի որ անցած ժամանակահատվածում հենց ֆեյսբուքյան հարթակներում են ծնունդ առել եւ ապա իրականության մեջ որոշակի կոնկրետ արդյունքների հասել տարբեր քաղաքացիական նախաձեռնություններ:

Նաեւ այս պատճառով դիտարկվել են ուսումնասիրվող լրատվամիջոցների էջերում ընթերցողների կողմից ընտրությունների թեմայի նկատմամբ հետաքրքրության աստիճանը, նյութերում ներկայացված իրադարձությունների, վերլուծությունների առումով նրանց դիրքորոշումների արտահայտման ակտիվությունը եւ այլ ասպեկտներ: Այս ամենը՝ ընթերցողների ընդհանուր թվի տատանումների, էջերի ողջ կոնտենտի եւ ընտրությունների թեմայով նյութերը հավանողների, դրանք ֆեյսբուքյան այլ լսարաններիի ուշադրությանը ներկայացնելու, դրանք քննարկողների տվյալները համեմատելու միջոցով (Like, share, comment):

Այսպես, դիտարկված բոլոր լրատվամիջոցների լսարանները փետրվար-մարտ ամիսների ընթացքում մեծացել են աստիճանաբար: Չնայած, որ կա մեծ տարբերություն լրատվամիջոցներին ընդհանրապես հավանություն տված, եւ ուրեմն՝ դրանց նյութերը պարբերաբար իրենց էջերում ստացող օգտատերերի ընդհանուր քանակի եւ այդ էջերի նյութերին որեւէ արձագանք տված (like, share, comment) օգտատերերի քանակի միջեւ: Դիտարկման ընթացքում բոլոր լրատվամիջոցների այս խմբի օգտատերերի քանակը կրճատվել է: Այսպես, 1in.am-ի ընդհանուր էջի նյութերը քննարկողների թիվը կրճատվել է փետրվարի 1-ի 7 198-ից մինչեւ մարտի 31-ի 3 979, News.am-ի, Zham.am-ի, 7or.am-ի դեպքում էլ այդ լսարանը կրճատվել է գրեթե 50%-ով: Ամենաշատ կորուստը էջը քննակողների առումով կրել է Tert.am-ը. (16 915 քննարկող փետրվարի 1-ին, 4 219 քննարկող մարտի 31-ին):

Լրատվամիջոցների ֆեյսբուքյան էջերի օգտատերերի եւ այդ էջերի կոնտենտին արձագանքողների քանակը փետրվարի 1-ի եւ մարտի 31-ի դրությամբ

Լրատվամիջոց ֆեյսբուքում	Ամիս/ Ամսաթիվ	Հավանում են	Քննարկում են
1in.am	1.02	31646	7198
	31.03	34959	3979
News.am	1.02	38189	6486
	31.03	45954	3695
Tert.am	1.02	42624	16915
	31.03	45870	4219
Zham.am	1.02	4199	839
	31.03	7517	468
7or.am	1.02	10179	1193
	31.03	12 943	692



Չնայած սրան, պաշտոնական քարոզարշավին մոտենալուն զուգընթաց մեծացավ ֆեյսբուքյան օգտատերերի հետաքրքրվածությունը ընտրությունների թեմայով: Այս են վկայում փետրվար եւ մարտ ամիսների ընթացքում ընտրությունների եւ մնացած բոլոր նյութերին արձագանքումների (նյութերը հավանողների- Like, դրանք իրենց ֆեյսբուքյան ընկերների ուշադրությանը ներկայացնողների- Share եւ կամ կարծիքներ գրողների-Comment) քանակների համեմատությունը:

Ընտրությունների թեմայով նյութերի եւ էջի ողջ կոնտենտի արձագանքների քանակ

	Փետրվար		Մարտ		Ընդամենը	
ԶԼՄ	Ընտրություններ ի թեմայով նյութերի արձագանքների քանակ	Օրվա բոլոր նյութերի արձագանքների քանակ	Ընտրություններ ի թեմայով նյութերի արձագանքներ ի քանակ	Օրվա բոլոր նյութերի արձագանքն երի քանակ	Ընտրություններ ի թեմայով նյութերի արձագանքներ ի քանակ	Օրվա բոլոր նյութերի արձագանք ների քանակ
1in.am	200	3393	512	2887	712	6280
	6%		18%		11%	
7or.am	162	823	322	793	484	1616
	20%		41%		30%	
news.am	169	7278	448	5685	617	12963
	2%		8%		5%	
tert.am	154	7632	877	4226	1031	11858
	2%		21%		9%	
zham.am	66	451	99	263	165	714
	15%		38%		23%	
Ընդամենը	**751**	**19577**	**2258**	**13854**	**3009**	**33431**
	4%		**16%**		**9%**	

Այսպես, եթե 1in.am-ի ֆեյսբուքյան էջում փետրվարին տեղադրված ընտրությունների մասին նյութերի արձագանքները կազմել են նույն ֆեյսբուքյան էջում եղած բոլոր նյութերի արձագանքների 6%-ը, ապա մարտին ընթերցողների նման հետաքրքրվածությունը դրսեւորվել է 18%-ով: 7or.am-ում ընտրությունների խնդիրների արձագանքները համապատասխանաբար փետրվարին կազմել են 20%, իսկ մարտին՝ 41%: News.am-ի ֆեյսբուքյան օգտատերերը փետրվարին ընտրությունների առումով արձագանքել են 2%-ով, հաջորդ ամիս՝ 8%-ով: tert.am-ում այդ ցուցանիշը փետրվարի 2%-ի դիմաց մեծացել է տաս անգամ՝ 21%: zham.am-դեպքում այդ հետաքրքրվածության աճը հետեւյալ պատկերն ունի՝ 15% փետրվարին եւ 38% մարտին:

Ֆեյսբուքյան այս դիտարկման արդյունքները եւս մեկ անգամ ապացուցում են այն պնդումը, որ հայաստանյան իրականության մեջ էլ նույնիսկ վառ արտահայտված քաղաքական կողմնորոշմամբ լրատվամիջոցների դեպքում լսարանի ընկալումների կապը տեղեկատվության նշանային բնութագրիչների հետ պարզ գծային չէ: Այլ

խոսքերով՝ եթե լրատվամիջոցն ունի իշխանական ուղղվածություն, ապա դա չի նշանակում, որ ընդդիմադիր ուժերի բացասական հիշատակումներով լեցուն նյութերը միանշանակ դրական արձագանքների են արժանանում լսարանի կողմից: Եւ հակառակը, ոչ իշխանական ուղղվածության լրատվամիջոցներում իշխանություններին տրված բացասական գնահատականները պարտադիր չէ, որ ստանան իշխանությունների նկատմամբ բացասական կեցվածք ունեցող լսարանի միանշանակ հավանությունը:

Այսպես, մեր դիտարկումները ցույց տվեցին, որ առավելագույն դրական կամ առավելագույն բացասական հիշատակումներ պարունակող օրերին ֆեյսբուքյան օգտատերերի արձագանքների քանակը էապես չի տարբերվել մյուս, այս առումով ավելի համաչափ օրերի արձագանքներից: Ճիշտ հակառակը՝ ընտրությունների մասին նյութերն ավելի շատ արձագանքներ են ստացել չեզոք նշանով հիշատակումներով հարուստ ֆեյսբուքյան թողարկումների ժամանակ: Հավանաբար այն պատճառով, որ լսարանի ակտիվությունը կախված է ոչ այնքան հիշատակումների նշանից, որքան նյութերում արծարծվող թեմաներից:

Սա մի եզրահանգում է, որի հիմնավոր լինելը կփորձենք ճշտել դիտարկման հաջորդ՝ պաշտոնական քարոզարշավի ընթացքում:

Ամեն ինչ թվերով : հավելված

2012 թ. փետրվարի 1-մարտի 31 ժամանակահատվածում առցանց լրատվամիջոցների ֆեյսբուքյան էջերում հիշատակված քաղաքական կուսակցությունների ցանկ

1. Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)
2. Օրինաց երկիր կուսակցություն (ՕԵԿ)
3. Բարգավաճ Հայաստան կուսակցություն (ԲՀԿ)
4. Ժառանգություն կուսակցություն
5. Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ)
6. Հայաստանի առաջադիմական կուսակցություն
7. Հայաստանի դեմոկրատական կուսակցություն
8. Հայաստանի երիտասարդական կուսակցություն
9. Հայաստանի ժողովրդական կուսակցություն
10. Հայաստանի կոմունիստական կուսակցություն
11. Հայաստանի մարքսիստական կուսակցություն
12. Հանրապետություն կուսակցություն
13. Միացյալ աշխատավորական կուսակցություն (ՄԱԿ)
14. Նոր ժամանակներ կուսակցություն
15. Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցություն (ՍԴՀԿ)
16. Ռամկավար ազատական կուսակցություն
17. Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ)
18. Հայոց համազգային շարժում (ՀՀՇ)
19. Ազատ դեմոկրատներ
20. Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություն
21. Ազգային ինքնորոշում միություն
22. Ազգային միաբանություն
23. Ազգային ժողովրդավարական միություն (ԱԺՄ)
24. Սահմանադրական իրավունք միություն (ՍԻՄ)
25. Ազգային վերածնունդ
26. Կանաչների կուսակցություն
27. Հայոց հայրենիք կուսակցություն
28. Ժողովրդավարական հայրենիք
29. Համերաշխություն կուսակցություն
30. Հայաստանի լիբերալ կուսակցություն
31. Հայրենիք ու պատիվ կուսակցություն
32. Ժողովրդավարական ուղի կուսակցություն (ԺՈՒԿ)
33. Ազգային ժողովրդավարական կուսակցություն (ԱԺԿ)
34. Ազգային Ժողովրդավարական դաշինք
35. Ազատ ժողովրդավարներ
36. Միացյալ ազատական ազգային կուսակցություն (ՄԻԱԿ)
37. Քրիստոնեաժողովրդական վերածնունդ
38. Ազգհային միանսության ուխտ կուսակցություն
39. Արդարություն կուսակցություն
40. Ազգային համաձայնություն կուսակցություն
41. Հզոր հայրենիք կուսակցություն
42. Ժողովրդավարություն – աշխատանք կուսակցություն (ԺԱԿ)
43. Պահպանողական կուսակցություն
44. Ժողովրդական կուսակցություն
45. Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն (ՀԱՍԿ)
46. Միավորված հայեր կուսակցություն (ՄՀԿ)
47. Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն (ՀԺԱՄ)

Աղյուսակ 1

Փետրվարի 1- մարտի 31 ժամանակահատվածում հայաստանյան 47 կուսակցությունների հիշատակումների քանակ դիտարկված լրատվամիջոցների ֆեյսբուքյան էջերում

ԶԼՄ	Հիշատակման նշան	Փետրվար	Մարտ	Ընդամենը
1in.am	0	359	478	**837**
	+	48	23	**71**
	-	110	101	**211**
	Ընդամենը	**517**	**602**	**1,119**
7or.am	0	307	424	**731**
	+	26	49	**75**
	-	102	147	**249**
	Ընդամենը	**435**	**620**	**1,055**
News.am	0	176	341	**517**
	+	1	9	**10**
	-	6	49	**55**
	Ընդամենը	**183**	**399**	**582**
Tert.am	0	342	633	**975**
	+	26	133	**159**
	-	55	214	**269**
	Ընդամենը	**423**	**980**	**1,403**
Zham.am	0	269	368	**637**
	+	24	67	**91**
	-	92	110	**202**
	Ընդամենը	**385**	**545**	**930**

ՌԵԳԻՈՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Աղյուսակ 2

Խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների հիշատակումների քանակ դիտարկված լրատվամիջոցների ֆեյսբուքյան էջերում

	1in.am	7or.am	news.am	tert.am	zham.am
ՀՀԿ	344	323	166	389	284
ԲՀԿ	200	144	75	237	148
ՀԱԿ	156	112	83	174	113
ՕԵԿ	87	60	56	88	62
Ժառանգություն կուսակցություն	85	102	42	94	72
ՀՅԴ	49	73	39	81	58
Ազատ դեմոկրատներ կուսակցություն	48	42	17	46	26
Հայաստանի կոմունիստական կուսակցություն	5	8	8	10	4
Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	2	5	6	2	3
Միավորված հայեր	0	4	2	2	2

ՌԵԳԻՈՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2012 թ. փետրվարի 1-մարտի 31 ժամանակահատվածում առցանց լրատվամիջոցների Ֆեյսբուքյան էջերում խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ եւ նշան

Ով, ում մասին եւ ինչպես է խոսել

Հայաստանի Հանրապետական կուսակցությունն իր եւ այլ ուժերի մասին

		1in.am				7or.am				news.am				tert.am				zham.am			
Ով (հիշատակման հեղինակ)	Ում մասին	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը
		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-	
ՀՀԿ	ՀՀԿ	46	15	4	**65**	53	9	1	**63**	31	4	3	**38**	42	28	1	**71**	35	17	0	**52**
	ՕԵԿ	2	0	0	**2**	5	0	0	**5**	5	0	0	**5**	3	1	0	**4**	4	1	0	**5**
	ԲՀԿ	12	1	0	**13**	9	0	0	**9**	9	0	1	**10**	18	1	7	**26**	9	1	5	**15**
	Ժառանգու-թյուն	5	0	1	**6**	3	1	0	**4**	3	0	0	**3**	5	0	2	**7**	0	0	1	**1**
	ՀՅԴ	3	0	0	**3**	3	0	0	**3**	2	0	1	**3**	4	0	5	**9**	1	0	1	**2**
	ՀԱԿ	5	0	2	**7**	2	0	2	**4**	4	0	1	**5**	9	1	2	**12**	3	0	1	**4**
	Ազատ դեմոկրատ-ներ	2	0	0	**2**	2	0	0	**2**	0	0	1	**1**	0	0	0	**0**	0	0	1	**1**
	Իշխանու-թյուններ	0	2	0	**2**	0	0	0	**0**	0	0	0	**0**	1	2	0	**3**	1	0	0	**1**
	Ընդդիմու-թյուն	0	0	0	**0**	0	0	0	**0**	0	0	0	**0**	0	0	0	**0**	2	0	0	**2**
	Անկախ թեկնածու	0	0	0	**0**	0	0	0	**0**	1	0	0	**1**	1	2	0	**3**	1	0	0	**1**

Օրինաց Երկիր կուսակցությունն իր եւ այլ ուժերի մասին

		1in.am				7or.am				news.am				tert.am				zham.am			
Ով (հիշատակման հեղինակ)	Ում մասին	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդա-մենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը
		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-	
ՕԵԿ	ՀՀԿ	2	0	0	**2**	0	0	1	1	2		0	2	2	1	0	3	0	1	0	1
	ՕԵԿ	11	4	1	**16**	9	0	1	10	9		1	10	5	8	4	17	7	3	1	11
	ԲՀԿ	1	0	0	**1**	0	1	0	1	2		0	2	1	0	0	1	1	0	0	1
	Ժառանգություն	0	0	0	**0**	0	1	0	1	0	0	0	0	1	0	0	1	1	0	0	1
	ՀՅԴ	0	0	0	**0**	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	1	1	0	0	1
	ՀԱԿ	0	1	0	**1**	0	1	0	1	0	0	0	0	1	0	0	1	1	0	0	1
	Իշխանություններ	0	1	0	**1**	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	2	0	0	0	0
	Ընդդիմություն	0	0	0	**0**	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0

Բարգավաճ Հայաստան կուսակցությունն իր եւ այլ ուժերի մասին

		1in.am				7or.am				news.am				tert.am				zham.am			
Ով (հիշատակման հեղինակ)	Ում մասին	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդա-մենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը
		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-	
ԲՀԿ	ՀՀԿ	1	1	3	5	5	0	2	7	4	0	0	4	9	2	2	13	7	0	2	9
	ՕԵԿ	1	0	0	1	1	0	0	1	2	0	0	2	4	0	1	5	1	0	1	2
	ԲՀԿ	21	9	0	30	25	7	0	32	17	0	0	17	20	16	0	36	13	14	0	27
	Ժառանգություն կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	2	0	0	2	0	0	0	0
	ՀՅԴ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0
	ՀԱԿ	1	0	0	1	2	0	0	2	0	0	0	0	2	1	0	3	0	0	0	0
	Իշխանություններ	0	0	1	1	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	2	0	0	0	0
	Անկախ թեկնածու	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0

Ժառանգություն կուսակցությունն իր եւ այլ ուժերի մասին

		1in.am				7or.am				news.am				tert.am				zham.am			
Ով (հիշատակման հեղինակ)	Ում մասին	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդա-մենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը
		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-	
Ժառան-գություն	ՀՀԿ	4	0	0	4	7	0	7	14	0	0	3	3	2	0	8	10	3	0	10	13
	ՕԵԿ	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0
	ԲՀԿ	0	0	0	0	2	1	1	4	0	0	0	0	0	1	1	2	5	0	1	6
	ժառանգություն	11	2	2	15	21	1	0	22	4		0	4	15	6	2	23	10	7	1	18
	ՀՅԴ	2	0	0	2	7	0	0	7					1	1	0	2	5	0	0	5
	ՀԱԿ	2	0	0	2	2	0	0	2	0		1	1	3	0	0	3	3	0	1	4
	Ազատ դեմոկրատ-ներ	6	0	0	6	6	0	0	6	1		0	1	8	2	1	11	4	1	0	5
	Իշխանություններ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	3	1	7	11	1	0	2	3
	Ընդդիմու-թյուն	0	0	0	0	0	0	0	0	0		1	1	1	1	0	2	1	0	0	1
	Անկախ թեկնածու	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	2	0	0	2

Հայ Յեղափոխական Դաշնակցությունն իր եւ այլ ուժերի մասին

		1in.am				7or.am				news.am				tert.am				zham.am			
Ով (հիշատակման հեղինակ)	Ում մասին	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը
		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-	
ՀՅԴ	ՀՅԿ	4	0	0	4	9	0	9	18	1	0	0	1	3	0	6	9	3	0	5	8
	ՕԵԿ	2	0	0	2	2	0	0	2	0	0	0	0	3	0	1	4	1	0	1	2
	ԲՀԿ	2	0	0	2	5	2	0	7	0	0	0	0	4	0	1	5	4	0	1	5
	Ժառանգություն կուսակցություն	1	0	0	1	5	0	0	5	0	0	0	0	0	0	0	0	2	0	0	2
	ՀՅԴ	5	0	0	5	22	2	1	25	6	0	0	6	6	9	0	15	10	3	0	13
	ՀԱԿ	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0	1	0	1	2	0	0	2	2
	Ազատ դեմոկրատներ կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	1
	Իշխանություններ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	3	0	5	8	0	0	1	1
	Ընդդիմություն	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0

ՌԵԳԻՈՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայաստանի կոմունիստական, Հայաստանի դեմոկրատական կուսակցություններն իրենց եւ այլ ուժերի մասին

		1in.am				7or.am				news.am				tert.am				zham.am			
Ով (հիշատակման հեղինակ)	Ում մասին	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը
		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-	
Հայաստանի կոմունիստական կուսակցություն	ՀՀԿ	1	0	0	1	3			3	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0
	ԲՀԿ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0
	ՀԱԿ	0	0	1	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	2	2	0	0	0	0
	Հայաստանի կոմունիստական կուսակցություն	2	1	0	3	4	0	0	4	2	0	0	2	0	2	0	2	1	0	0	1
Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	ՀՀԿ	0	0	0	0	0	0	0	0	1		0	1	0	0	0	0	0	0	0	0
	ՀՅԴ	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0	0	1	0	1	1	0	0	1
	ՀԱԿ	0	0	0	0	0	0	0	0	0		1	1	0	0	0	0	0	0	0	0
	Իշխանություններ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	0	0	0	0	1	0	0	1	2		0	2	0	0	0	0	0	1	0	1
	Հայաստանի կոմունիստական կուսակցություն	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0	0	1	0	1	1	0	0	1

ՌԵԳԻՈՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հայ Ազգային Կոնգրեսն իր եւ այլ ուժերի մասին

		1in.am				7or.am				news.am				tert.am				zham.am			
Ով (հիշատակման հեղինակ)	Ում մասին	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը
		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-	
ՀԱԿ	ՀՀԿ	3	1	14	18	5	0	15	20	4	0	8	12	2	0	15	17	2	0	10	12
	ՕԵԿ	0	0	1	1	1	0	0	1	0	0	0	0	1	0	0	1	0	0	1	1
	ԲՀԿ	5	0	0	5	5	0	1	6	1	0	0	1	1	0	3	4	3	0	1	4
	Ժառանգություն կուսակցություն	3	0	1	4	6	0	0	6	0	0	2	2	1	0	2	3	4	0	0	4
	ՀՅԴ	3	0	0	3	4	0	0	4	1	0	0	1	2	0	0	2	2	0	0	2
	ՀԱԿ	29	9	0	38	22	4	1	27	18	3	0	21	14	12	0	26	16	6	0	22
	Ազատ դեմոկրատներ կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0
	Իշխանություններ	3	0	10	13	0	0	3	3	0	0	0	0	3	0	8	11	0	0	7	7
	Ընդդիմություն	1	0	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
	Անկախ թեկնածու	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	1	3	0	0	2	2
	Հայաստանի կոմունիստական կուսակցություն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	0	0	0	0

Ազատ դեմոկրատներ կուսակցությունն իր եւ այլ ուժերի մասին

		1in.am				7or.am				news.am				tert.am				zham.am			
Ով (հիշատակման հեղինակ)	Ում մասին	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը	Ինչպես (հիշատակման նշան)			Ընդամենը
		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-		0	+	-	
Ազատ դեմոկրատներ կուսակցություն	ՀՀԿ	1	0	1	2	2	2	0	4	0	0	0	0	1	0	4	5	0	0	3	3
	ՕԵԿ	0	0	0	0	1	0	0	1	0	0	0	0	0	0	2	2	0	0	0	0
	ԲՀԿ	0	0	1	1	1	0	2	3	0	0	0	0	0	1	2	3	1	0	0	1
	Ժառանգություն կուսակցություն	8	0	0	8	8	0	0	8	1		0	1	2	1	0	3	3	3	0	6
	ՀՅԴ	1	0	0	1	1	0	0	1	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	1
	ՀԱԿ	1	0	2	3	2	0	1	3	0	0	0	0	2	2	0	4	0	0	1	1
	Ազատ դեմոկրատներ կուսակցություն	7	4	0	11	9	2	1	12	3		0	3	0	0	0	0	4	3	0	7
	Իշխանություններ	0	0	1	1	0	0	0	0	0		1	1	0	0	0	0	0	0	4	4
	Ընդդիմություն	1	0	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	1	0	1	1	0	0	1

ՌԵԳԻՈՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ (ՀՀԿ)



Քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ (ՕԵԿ)

Քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ (ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ)



Քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ (ԲՀԿ)



Քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ (ՀԱԿ)



Քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ (ՀՅԴ)



Քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ (ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐ)



Քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ (ՀԴԿ)



Քաղաքական կուսակցությունների հիշատակումների քանակ (ՀԿԿ)